

Տիգրանակերտը պատմականապէս եղել է Հայերու ու Քիւրդերու հայրենիքը մ'անգամայն : Գիտական նոր ուսումնասիրութիւնները Տիգրան առաջինը կը համարեն մեծն Տիգրանը՝ որ աշխարհակալի անուն ունեցաւ, ու երկար պատերազմներ մղեց Հռովմայեցւոյ դէմ, ու կը հաստատեն երկու Տիգրաններու նոյնացումը : Թէ ըստ Հայ վիտական պատմութեան՝ որ Տիգրան առաջինը, տասը հազար զերկներ հանեց Մարաստանէն ու բերաւ Մասիս լեռան արեւելակողմը բնակեցուց, որոնցմէ առաջ եկան Մուրացոյն այսինքն Մարերու նախարարութիւնը կամ Վիշապազունք. և թէ ըստ նոր ուսումնասիրութիւններու՝ Մեծն Տիգրանը իր նորակառոյց Տիգրանակերտը կը լեցնէ ալլազան տարրերով. երկու հանգամանքներու մէջ ալ կը տեսնուի այս ցեղերու խառն բնակակցութիւնը, որոյ մասին աւելորդ չէ ծանօթութիւններ բերել զարձեւող Noël Dolens et A. Khatchi «Histoire des Anciens Armeniens» գրքի 134 երեսէն (*) :

(*) . — «Նոր մայրաքաղաքը (Տիգրանակերտը) բարձրացաւ գետնէն այնպէս՝ որ կարծես Մոգական գաւաղանի արդիւնք մը լինէր, թագաւորութեան առաջին ընտանիքները ստիպուեցան արտաքրուումի սպառնալիքին տակ այնտեղ փոխադրել իրենց բնակութիւնը, երեք հարիւր հազար բնակիչներ, — Ասորեստանցիներ, Ատիալէնցիներ (Adiabényens), Կորդուացիներ (Gordyériens), և ուրիշները բռնի բերուելով հաստատուեցան այնտեղ, առանց հաշուելու Կիլիկիայի և Կապադովիայի Հեւլենները, զորս Տիգրանը նոյնպէս այնտեղ զրկեց, ինչպէս նաև Մեծիայի մէջ (Médée) : Տիգրանակերտը եղաւ իսկապէս նախկին Ասորական և Բաբելոնական ահաւ գին քաղաքներու վերակենդանութիւնը : »

(երես 131) . «Մեծիայի Ասորպատէն թագաւորը որ իր աղջիկը տուած էր Տիգրանի որդուն, պարտաւորուեցաւ անոր զրկել 40,000 թեթևաշարժ զօրք և 10,000 ձիաւորներ (Strapone X 1. 13, 2. d'après Apollonide), կար նոյնպէս ուրիշ հեծեալ տիգաւորներու զօրաբաժիններ, — Մարերը (les Mardes), — աղգարնակութիւնը Կորդուաց և Ուրմիոյ լճի միջև, (Կենթագրուի որ Քիւրդերը (Gordyènes, Carduques) իրանական ծագումէն, Մետացիներու և Մարերու խառնուրդ մ'էին) Արաբ Պէտէվիները, Կորդուացիները, որոնք ճանապարհների պատրաստութեանց աշխատանքին վարժ էին : »